Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2019թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton Audit S.R.L
4d, Gara Herastrau, Bucharest
Green Court, Building C, District 2
Bucharest, Romania

T + 40 21 320 23 28
F + 40 21 320 23 27

E office@ro.gt.com
W www.grantthornton.ro

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Ձևափոխված կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ բացառությամբ *Կարծիքի ձևափոխման հիմքեր* պարագրաֆում նշված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 4-ում, Ընկերությունը նախորդ տարիներին իրականացրել էր հիմնական միջոցների իրական արժեքի գնահատում, ինչի արդյունքում ճանաչել էր 6,195,070 հազար դրամ գումարի չափով արժեզրկում: Գնահատումն իրականացրել է անկախ գնահատող ընկերություն:

Նախորդ աուդիտորը այս առնչությամբ վերապահումով եզրակացություն էր արտահայտել 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերը նկարագրված հարցը էական ազդեցություն ունի նաև ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ ձևակերպված արժեզրկման ճշտությունը ստուգելու համար, մասնավորապես մենք չկարողացանք համոզվել կիրառված մեթոդների և դատողությունների, ինչպես նաև կատարված հաշվարկների ճշտության մեջ՝ հիմնական միջոցների վերականգնողական արժեքը որոշելիս: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել՝ նշված գումարների ճշգրտման անհրաժեշտությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր ձևափոխված կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտ են արվել այլ աուդիտորի կողմից, որը 2019թ.հունիսի 27-ին արտահայտել է վերապահումով եզրակացություն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերապահման հիմքը վերաբերվում էր հիմնական միջոցների գծով ճանաչված արժեզրկման գումարի ճշտության ստուգման անհնարինությանը, ինչպես նաև հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների փոխհատուցվող գումարի գնահատմանը:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և

համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, և ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016թ.

Grant Thornton

հունիսի 22-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Ընկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն, և չտրամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Ընկերության հիմնական գործունեության՝ էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով Ընկերությունը բավարարել է վերոնշյալ պայմանը 2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանում:

Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ

Grant Thornton

Բուխարեստ, Ռումինիա

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

Լիլիթ Արաբաջյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու

19 հունիսի 2020թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)	2018թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներ-կայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	140,459,733	119,154,032	72,726,994
Ոչ նյութական ակտիվներ	5	163,133	104,574	136,229
Ոչ ընթացիկ կանխավճարներ		-	2,935,307	2,868,015
Ներդրումներ բաժնետոմսերում		41,804	41,804	41,804
		140,664,670	122,235,717	75,773,042
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	6	21,531,666	21,542,372	23,152,014
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	6,424,160	3,504,623	5,217,285
Ժամկետային ավանդներ	8	9,013,786	8,133,963	8,948,517
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	7,445	133,277	173,455
		36,977,057	33,314,235	37,491,271
Ընդամենը ակտիվներ		177,641,727	155,549,952	113,264,313

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)	2018թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներ-կայացված)
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կապիտալ և պահուստներ	10			
Բաժնետիրական կապիտալ		14,663,599	14,663,599	14,663,599
Պահուստային կապիտալ		954,943	954,943	954,943
Լրացուցիչ կապիտալ		1,585,206	1,585,206	1,585,206
Կուտակված շահույթ		30,671,051	32,033,822	35,199,593
		47,874,799	49,237,570	52,403,341
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	11	86,899,392	74,629,032	32,947,334
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	13,610,510	12,260,489	7,827,343
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	1,999,367	2,042,476	2,605,222
Ոչ ընթացիկ առևտրային կրեդիտորական պարտքեր		-	-	3,539,115
		102,509,269	88,931,997	46,919,014
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	11	10,470,288	811,546	390,519
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	16,671,316	16,568,839	13,153,625
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		116,055	-	397,814
		27,257,659	17,380,385	13,941,958
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		177,641,727	155,549,952	113,264,313

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 19-ին:

Մովսես Վարդանյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Հասույթ պայմանագրերից	15	22,655,121	17,437,337
Վաճառքի ինքնարժեք	16	(23,433,416)	(20,390,078)
Համախառն վնաս		(778,295)	(2,952,741)
Այլ եկամուտ		1,151,766	472,398
Վարչական ծախսեր	17	(1,540,540)	(1,595,346)
Այլ գործառնական ծախսեր	18	(1,187,065)	(686,629)
Գործառնական գործունեությունից վնաս		(2,354,134)	(4,762,318)
Ֆինանսական եկամուտ		1,163,340	1,274,341
Ֆինանսական ծախսեր	19	(762,163)	(281,291)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ, զուտ	20	663,132	40,751
Վնաս մինչև հարկերը		(1,289,825)	(3,728,517)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	21	(72,946)	562,746
Տարվա վնաս		(1,362,771)	(3,165,771)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(1,362,771)	(3,165,771)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 19-ին:

Մովսես Վարդանյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակ-ված շահույթ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	14,663,599	954,943	1,585,206	35,199,593	52,403,341
Տարվա վնաս	-	-	-	(3,165,771)	(3,165,771)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք (վերաներկայացված)	-	-	-	(3,165,771)	(3,165,771)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	14,663,599	954,943	1,585,206	32,033,822	49,237,570
Տարվա վնաս	-	-	-	(1,362,771)	(1,362,771)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(1,362,771)	(1,362,771)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,663,599	954,943	1,585,206	30,671,051	47,874,799

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	26,270,236	21,363,764
Մուտքեր շնորհներից	190,242	402,080
Այլ մուտքեր	20,331	106,830
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(16,618,096)	(11,180,813)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոնցեր	(5,646,218)	(5,507,721)
Վճարված շահութահարկ	-	(1,161,577)
Վճարված այլ հարկեր և պարտադիր վճարներ	(5,480,964)	(7,285,151)
Վճարված տոկոսներ	(2,036,450)	(992,042)
Այլ վճարումներ	(175,776)	(226,020)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(3,476,695)	(4,480,650)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում	(250,510)	(136,516)
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից մուտքեր	6,424	2,476
Ստացված տոկոսային եկամուտ	1,193,423	1,149,327
Ներդրված ավանդներ	(909,906)	939,568
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	39,431	1,954,855
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	3,378,473	2,532,973
Վարկերի և փոխառությունների մարում	(62,753)	(62,753)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,315,720	2,470,220
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(121,544)	(55,575)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(4,288)	15,397
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	133,277	173,455
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	7,445	133,277

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) ստեղծվել է 1994թ. հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Հայկական ատոմային էլեկտրակայան» ՀՆՁՊ փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու մասին թիվ 492 որոշման հիման վրա:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արմավիրի շրջանային բաժանմունքում 1996թ. հուլիսի 29-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերության բաժնետոմսերի 100% պատկանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Ընկերությունը գործում է հետևյալ լիցենզիաներով.

- Էկեկտրաէներգիայի և հզորության արտադրության լիցենզիա, որը տրվել է 1999թ. հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի հանձնաժողովի կողմից, վավեր է մինչև 2024թ. հունիսի 10-ը:
- Միջուկային տեղակայանքի շահագործման լիցենզիա, որը տրվել է 2011թ. ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2021թ. ապրիլի 1-ը:
- Ռադիոակտիվ նյութերի ներկրման լիցենզիա, որը տրվել է 2006թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2026թ. սեպտեմբերի 7-ը:
- Ռադիոակտիվ նյութերի օգտագործման լիցենզիա, որը տրվել է 2006թ. մայիսի 4-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2026թ. մայիսի 4-ը:

Ընկերության գործունեությունը՝ այդ թվում սակագների քաղաքականությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

ՀՀ կառավարության՝ 1996թ. ապրիլի 4-ի թիվ 98 որոշման համաձայն Ընկերությունը հանդիսանում է միջուկային տեղակայանքի շահագործող և գործում է ատոմային էներգիայի ոլորտին վերաբերող միջազգային պայմանագրերի համաձայն, որոնք վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Կանոնադրության համաձայն Ընկերության հիմնական գործունեությունն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգ և արդյունավետ շահագործումն է, ինչպես նաև, էլեկտրաէներգիայի արտադրությունը, վաճառքն ու արտահանումը:

Ընկերության արտադրական հզորությունները ներառում են երկու էներգաբլոկ: Համաձայն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման՝ 1989թ. անվտանգության նկատառումներով երկու

էներգաբլոկների շահագործումը դադարեցվել է: 1993թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է ընդունել վերսկսել ատոմակայանի գործունեությունը: Էներգետիկայի նախարարությունը ատոմակայանի էներգաբլոկների գործունեությունը վերսկսելու համար մշակել է հայեցակարգեր և թիվ 2 էներգաբլոկի անվտանգությունը բարձրացնելու միջոցառումների անհրաժեշտ գործողությունների ցանկ: 1995թ. նոյեմբերի 5-ին՝ 6.5 տարի դադարից հետո, թիվ 2 էներգաբլոկը վերսկսեց իր գործունեությունը:

Ներկայումս Ընկերությունն իրականացնում է երկու ծրագիր.

- Թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր, համաձայն 2015թ. փետրվարի 5-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կառավարության միջև կնքված պայմանագրի, որը ենթադրում է 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի 10 տարով երկարացում: Աշխատանքները պլանավորվում է ավարտել 2021թ:
- Էներգետիկ հատվածի ֆինանսական վերականգնման ծրագիր, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից, 2016թ. մայիսի 16-ին կնքված վարկային պայմանագիր 8615-AM: Ծրագրի նպատակն է էներգիա արտադրող պետական ընկերությունների և էներգիայի բաշխման մասնավոր ընկերության ֆինանսական վիճակի բարելավման միջոցով աջակցել Հայաստանի Հանրապետության ջանքերը էլեկտրաէներգիայի համապատասխան և հուսալի մատակարարումը պահպանելու հարցում:

Ներկայումս Ընկերությունն արտադրում է Հայաստանի Հանրապետությունում սպառվող էլեկտրաէներգիայի 40%-ը:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,670 մարդ (2018թ.՝ 1,788 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0910 ք. Մեծամոր:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով

ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2019թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՖՀՄՍ 9 (Փոփոխություններ) *«Ֆինանսական գործիքներ. կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ»*

ՖՀՄՍ 9-ի համաձայն պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, պայմանով, որ պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են «միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ» (SPPI չափանիշ) և գործիքը պահվում է այդ դասակարգմանը համապատասխանող բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ֆինանսական ակտիվը բավարարում է SPPI չափանիշին՝ անկախ որևէ իրադարձությունից կամ հանգամանքից, որը պատճառ է հանդիսանում պայմանագրի վաղաժամ դադարեցման համար և անկախ նրանից, թե պայմանագրի վաղաժամ դադարեցման պատճառով որ կողմն է վճարում կամ ստանում համապատասխան փոխհատուցում:

Այս փոփոխության ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»*

ՖՀՄՍ 16-ը *«Վարձակալություններ» փոխարինում է* ՀՀՄՍ 17-ը *«Վարձակալություն»*, առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»*):

Այս նոր ստանդարտի կիրառման արդյունքում բոլոր նախկին գործառնական վարձակալությունների համար ճանաչվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ այն վարձակալությունների, որոնք

որոշակիացված են որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ և որոնց մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրարժեք վարձակալությունների համար, անցման ժամանակ կարող է կիրառվել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու այլընտրանքները դիտարկելիս կարելի է օգտվել է հետադարձ ամսաթվով դատողություններ կիրառելու հնարավորությունից՝ վարձակալության ժամկետը որոշելու համար:

Այս փոփոխության ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 23 *«Շահութահարկով հարկման մոտեցումների վերաբերյալ անորոշություն»*

ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 23-ը տրամադրում է ուղեցույց այն բանի վերաբերյալ, թե ինչպես արտացոլել ՀՀՄՍ 12-ի համաձայն հարկերի հաշվառման մեջ անորոշությունների ազդեցությունը, մասնավորապես. (ա) արդյոք անորոշ հարկային մոտեցումները պետք է դիտարկվեն առանձին, (բ) ենթադրություններ հարկային մարմինների ստուգումների վերաբերյալ, (գ) հարկվող շահույթի (հարկային վնասի), հարկման բազաների, չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային կրեդիտների, ինչպես նաև հարկի դրույքաչափերի որոշում, և (դ) փաստերի և հանգամանքների փոփոխությունների ազդեցությունը:

Այս փոփոխության ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

Տարեկան բարեփոխումներ՝ 2015-2017թթ.

2015-2017թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերող փոփոխություններն ամփոփված են ստորև.

ՀՀՄՍ 12 *«Շահութահարկ.* որպես սեփական կապիտալի տարր դասակարգված գործիքների վճարման հետ կապված հարկային հետևանքները»

ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները պարզաբանում են, որ դիվիդենտների հետ կապված հարկային հետևանքները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապարփակ արդյունքում կամ սեփական կապիտալում՝ ելնելով նրանից, թե ընկերությունը որտեղ է սկզբնապես ճանաչել այդ գործարքները կամ իրադարձությունները:

Այս փոփոխության ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

ՀՀՄՍ 23 *«Փոխառության ծախսումներ.* կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներ»

ՀՀՄՍ 23-ի 14-րդ հոդվածը հստակեցնում է, թե ինչպես որոշել փոխառության ծախսերի այն գումարը, որը ենթակա է կապիտալացման, երբ ընկերությունը ստանում է ընդհանուր նպատակների համար փոխառու միջոցներ և օգտագործում է դրանք որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար:

ՀՀՄՍ 23-ը պահանջում է, որ ընդհանուր նպատակների համար ստացված փոխառու միջոցները որոշելիս ընկերությունը բացառի «*փոխառությունները, որոնք ստացվել են հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար*»: ՀՀՄՍԽ-ն դիտարկել է, որ ընկերությունները կարող են սխալ մեկնաբանել այս բառերը՝ ենթադրելով, որ ընդհանուր նպատակով ստացված փոխառու միջոցներից անհրաժեշտ է բացառել այն փոխառու միջոցների մնացորդները, որոնք սկզբնապես ստացվել էին հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար, որն այժմ պատրաստ է նպատակային օգտագործման կամ վաճառքի համար:

Այսպիսով, փոփոխությունները պարզաբանում են, որ երբ որակավորվող ակտիվը պատրաստ է իր նպատակային օգտագործման կամ վաճառքի համար, ընկերությունը պետք է դիտարկի սկզբնապես հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար ստացված փոխառության մնացորդը որպես ընդհանուր նպատակով ստացված փոխառություն:

Փոփոխությունները ենթակա են կիրառման առաջընթաց (այսինքն՝ միայն այն փոխառության ծախսումների համար, որոնք առաջացել են այս փոփոխություններն առաջին անգամ կիրառելու հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո) քանի որ փոխառության ծախսումները հետընթաց կապիտալացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման հետ կապված ծախսերը կարող են էապես գերազանցել ակնկալվող օգուտները:

Այս փոփոխության ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*» և ՀՀՄՍ 8 (Փոփոխություններ) «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*» - «Էականի» սահմանում

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխությունները՝ «Էականի» սահմանումը պարզաբանելու համար և հայեցակարգային հիմունքներում ներկայացված սահմանումը բուն ստանդարտներում ներկայացվածի հետ համապատասխանեցնելու համար:

ՀՀՄՍ 1-ում էականության վերաբերյալ պահանջները փոփոխվել են՝ շեշտադրելու համար այն փաստը, որ տեղեկատվությունը չպետք է խմբավորվի կամ ապախմբավորվի այնպիսի եղանակով, որը կթաքցնի էական տեղեկատվությունը: Փոփոխություններում նաև մատնանշվում է, որ էականությունը կիրառվում է ֆինանսական հաշվետվությունների բոլոր տարրերում՝ ներառյալ առաջնային ֆինանսական հաշվետվությունները, ծանոթագրությունները և հատուկ բացահայտումները, որոնք պահանջվում են առանձին ՖՀՄՍ-ներով: Փոփոխության նպատակն է խրախուսել ընկերություններին (և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և

վերանայման գործընթացում ներգրավված այլ անձանց) ուշադիր մոտեցում ցուցաբերել ներկայացման պահանջներին և այն տարրերին, որոնք պետք է ներառվեն ֆինանսական հաշվետվություններում:

Առաջնային հաշվետվությունների տողերի բովանդակությունը հստակեցվել է, պարզաբանելով, որ ինչպես կարիք կա ոչ էական տարրերը խմբավորել, այնպես էլ հնարավոր է, որ էական տարրեր պարունակող անհատական տողերը կարիք լինի ապախմբավորել:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* - պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2020թ. հունվար ամսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* փոփոխությունները, որոնք հստակեցնում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու համար կիրառվող չափանիշները: Փոփոխությունները նախատեսված են պարտավորությունների դասակարգման հանդեպ ավելի ընդհանուր մոտեցում տրամադրելու համար՝ հիմք ընդունելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրային պայմանները:

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը հիմնվում է այն հանգամանքի վրա, թե արդյոք Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ իրավունք ունի՞ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով: Փոփոխությունները նաև պարզաբանում են, որ «մարել» եզրույթը ներառում է կանխիկի, ապրանքների, ծառայությունների կամ սեփական կապիտալի գործիքների փոխանցումը, եթե սեփական կապիտալի գործիքները փոխանցելու պարտավորությունը չի առաջանում փոխարկման հատկանիշից, որը բաղադրյալ ֆինանսական գործիքի պարտավորության բաղադրիչից առանձին է դասակարգված որպես սեփական կապիտալի գործիք:

Քանի որ այս փոփոխությունները գոյություն ունեցող պահանջները պարզաբանում, բայց չեն փոխում, չի ակնկալվում, որ դրանք նշանակալի ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների փոփոխություններ

Վերանայված հայեցակարգային հիմունքներում ներառված է չափման մասին նոր գլուխ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերաբերյալ ուղեցույց, կատարելագործված բնորոշումներ և ուղեցույցներ, մասնավորապես՝ պարտավորության սահմանումը, ինչպես նաև կարևոր բնագավառների վերաբերյալ պարզաբանումներ, ինչպիսիք են օրինակ՝ կառավարման, զգուշավորության և չափման վերաբերյալ անորոշության դերը ֆինանսական հաշվետվություններում:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ընկերությունը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝

դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 553.65 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ, փոխանցող հարմարանքներ	-	10-50 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	-	5-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	10 տարի
Այլ	-	1-10 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որոնք ներկայացված են ստորև.

Բանաձևեր	-	4-5 տարի
Լիցենզիաներ, արտոնագրեր և համակարգչային ծրագրեր	-	2-5 տարի

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություններ

Ընկերությունը որպես վարձակալ

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը որպես վարձատու

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ՖՀՄՍ 16-ի համաձայն, համադրելի ժամանակաշրջանի համեմատ չի փոփոխվել:

Որպես վարձատու Ընկերությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում: Վարձակալական եկամուտը ճանաչվում է վարձակալության ժամկետի ընթացքում՝ գծային հիմունքով:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ)

մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Միջուկային վառելիք

Միջուկային վառելիքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է պաշարների դասում: Վառելիքը ստացվում է հատուկ տարաներով, որոնք՝ ռեակտորում տեղադրվելուց հետո, Ընկերությունն օգտագործում է 5-ից 6 տարի: Միջուկային վառելիքը ճանաչվում է որպես ծախս՝ հիմնվելով ամսական հաշվարկների վրա՝ ինժեներների կողմից հատուկ մշակված բանաձևերի համաձայն: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ծախսագրված գումարը համապատասխանեցվում է փաստացի օգտագործված վառելիքի ծախսին:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնասում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները, բանկային ավանդները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում

Ընկերությունը հաշվառում է իր ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, եթե դրանք բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է համապատասխան դրամական հոսքերը «պահել հավաքագրման համար» և վաճառել դրանք և
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Այլ համապարփակ արդյունքում ճանաչված ցանկացած օգուտը կամ վնասը կմարվի ակտիվի ապաճանաչման ժամանակ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են ներդրված ավանդները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը:

ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 25-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս: Ընկերությունն այլ փոխառության ծախսումները ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են: Ընկերությունը

սկսում է կապիտալացնել փոխառության ծախսումները որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս՝ մեկնարկի ամսաթվին, երբ Ընկերությունն առաջին անգամ բավարարում է հետևյալ բոլոր պայմաններին. ակտիվի համար կատարում է ծախսեր, կատարում է փոխառության ծախսումներ, ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են՝ ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար:

Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները բացառապես փոխառնում է որակավորվող ակտիվ ձեռք բերելու նպատակով, փոխառության ծախսումների գումարը, որը ենթակա է այդ ակտիվի վրա կապիտալացման, Ընկերությունը որոշում է որպես փոխառության փաստացի ծախսումներ, որոնք առաջանում են այդ փոխառությունից տվյալ ժամանակաշրջանում՝ հանած այդ փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումից ստացվող ցանկացած եկամուտ:

Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները փոխառնում է ընդհանուր նպատակներով և օգտագործում է որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով, Ընկերությունը կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշում է՝ այդ ակտիվի գծով ծախսերի նկատմամբ կիրառելով կապիտալացման դրույքը: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության չմարված փոխառություններին վերաբերող փոխառության ծախսումների միջին կշռված մեծությունն է, բացառությամբ այն փոխառությունների, որոնք բացառապես կատարվել են որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով:

Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է այն ժամանակաշրջանի ընթացքում, որի ժամանակ Ընկերությունը դադարեցնում է որակավորվող ակտիվների վրա կատարվող աշխատանքները: Փոխառության ծախսումների կապիտալացումը դադարեցվում է, երբ էական բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ են որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար, ավարտված են:

3.9 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Ընկերության սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.10 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա

համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Պայմանական պարտավորություններ

Պայմանական պարտավորությունը՝

- հնարավոր պարտականություն է՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում կազմակերպության կողմից, կամ
- ներկա պարտականություն է՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը, սակայն, չի ճանաչվում կամ որովհետև հավանական չէ, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, կամ էլ պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական պարտավորությունը չի ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, փոխարենը բացահայտվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ

պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.13 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.14 Հասույթ

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության տրամադրումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության տրամադրումից հասույթ

Էլեկրաէներգիայի վաճառքից և հզորության տրամադրումից հասույթը ճանաչվում է վերահսկումը պատվիրատուին փոխանցելու պահին: Վերահսկման փոխանցումը հիմնականում տեղի ունի, երբ էլեկտրաէներգիան առաքվում է հաճախորդին: Վերահսկողության փոխանցման պահը որոշելու համար նման դեպքերում չի պահանջվում բարդ դատողություն: Երբ էլեկտրաէներգիան առաքվել է համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Ընկերությունը այլևս չունի տնօրինման իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ

Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հող	Շենքեր և շինություններ	Փոխանցվող հարմարանքներ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, արտադրա-տնտեսական գույք և այլն	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2018թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)	7,612,620	22,850,474	9,471,940	48,381,359	8,601,913	32,244,465	129,162,771
Ավելացում	-	105,859	70	5,255,351	8,091,590	37,305,425	50,758,295
Օտարում	-	-	-	(26,153)	(31,518)	-	(57,671)
Ներքին շարժ	-	(467,564)	(315,541)	6,704,897	589,028	(6,510,820)	-
Վերադասակարգում պաշարներին	-	-	-	-	-	(195,396)	(195,396)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	7,612,620	22,488,769	9,156,469	60,315,454	17,251,013	62,843,674	179,667,999
Ավելացում	-	30,975	7,777	1,377,322	2,119,493	25,270,431	28,805,998
Օտարում	-	-	(91,775)	(814,881)	(1,921,142)	(1,175)	(2,828,973)
Ներքին շարժ	-	-	-	21,542,354	7,187,980	(28,730,334)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,612,620	22,519,744	9,072,471	82,420,249	24,637,344	59,382,596	205,645,024
Կուտակված մաշվածություն և արժեզրկում							
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	13,714,657	6,868,975	34,670,653	1,008,523	172,969	56,435,777
Տարվա հաշվարկ (վերաներկայացված)	-	1,102,129	369,319	2,252,425	401,779	-	4,125,652
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	(18,762)	(28,700)	-	(47,462)
Ներքին շարժ	-	(361,784)	(1,065,296)	(3,325,823)	4,752,903	-	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	-	14,455,002	6,172,998	33,578,493	6,134,505	172,969	60,513,967
Տարվա հաշվարկ	-	1,142,880	366,173	5,025,151	422,913	-	6,957,117
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	(61,468)	(1,218,001)	(1,006,324)	-	(2,285,793)
Ներքին շարժ	-	-	(32,016)	(1,049,342)	1,081,358	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	15,597,882	6,445,687	36,336,301	6,632,452	172,969	65,185,291
Հաշվեկշռային արժեք							
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	7,612,620	8,033,767	2,983,471	26,736,961	11,116,508	62,670,705	119,154,032
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,612,620	6,921,862	2,626,784	46,083,948	18,004,892	59,209,627	140,459,733

Անավարտ շինարարությունը ներառում է թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արժեքը 46,590,485 հազար դրամ գումարի չափով և որոշակի տեղակայման ենթակա սարքավորումներ 3,999,195 հազար դրամ գումարի չափով: 2014թ. մարտի 27-ին ՀՀ կառավարությունը վավերացրել է ատոմակայանի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետը 10 տարով երկարաձգելու ծրագիրը: Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքվել է պայմանագիր վերոնշյալ ծրագիրը ֆինանսավորելու նպատակով: Ծրագիրն իրականացվում և կառավարվում է «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի կողմից: Երկարաձգման աշխատանքների արդյունքում ատոմակայանի շահագործման ժամկետը կերկարաձգվի մինչև 2026թ.: Երկարաձգման աշխատանքները պլանավորվում են ավարտել 2021թ. վերջին:

2019թ, կապիտալացված փոխառության ծախսումների գումարը կազմել է 1,783,304 հազար դրամ (2018թ, կազմել է 1,283,594 հազար դրամ):

2017թ. Ընկերությունը գնահատել է իր հիմնական միջոցները: Գնահատումն իրականացվել է անկախ գնահատողների կողմից: Արդյունքում պարզվել էր, որ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որոշ հիմնական միջոցներ արժեզրկված էին, որի արդյունքում ճանաչվել էր արժեզրկման գծով վնաս 6,195,070 հազար դրամի:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը 8,247,861 հազար դրամ է (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,322,101 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ հոդվածներին.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Վաճառքի ինքնարժեք	6,752,161	3,921,071
Վարչական ծախսեր	150,543	155,717
Այլ գործառնական ծախսեր	54,413	48,864
	6,957,117	4,125,652

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Բանաձևեր	Լիցեն-զիաներ, ապրանքանիշեր և համակարգ-չային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	711,963	190,654	902,617
Ավելացում	60	20,100	20,160
Օտարում	(40,333)	-	(40,333)
Ներքին շարժ	23,854	(23,854)	-
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	695,544	186,900	882,444
Ավելացում	108,553	20,080	128,633
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	804,097	206,980	1,011,077
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	639,070	127,318	766,388
Տարվա հաշվարկ (վերաներկայացված)	28,947	22,868	51,815
Օտարման հետևանքով ամորտիզացիայի փակում	(40,333)	-	(40,333)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	627,684	150,186	777,870
Տարվա հաշվարկ	39,889	30,185	70,074
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	667,573	180,371	847,944
Հաշվեկշռային արժեք			
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	67,860	36,714	104,574
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	136,524	26,609	163,133

Ամորտիզացիայի ծախսը բաշխվել է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Վաճառքի ինքնարժեք	21,437	15,975
Վարչական ծախսեր	24,655	27,045
Այլ գործառնական ծախսեր	23,982	8,795
	70,074	51,815

6 Պաշարներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Միջուկային վառելիք ռեակտորում	9,704,323	9,232,020
Միջուկային վառելիք պահեստում	6,152,983	7,213,600
Հումք	2,263,624	1,989,359
Պահեստամասեր	2,563,567	2,398,612
Վառելիք	131,801	134,373
Այլ	715,368	574,408
	21,531,666	21,542,372

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 8,907,201 հազար դրամ (2018թ.՝ 8,338,948 հազար դրամ):

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,768,123	2,852,214
Այլ դեբիտորական պարտքեր	8,179	4,718
	3,776,302	2,856,932
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	1,318,967	54,922
Կանխավճարված հարկեր	1,328,891	592,769
	2,647,858	647,691
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,424,160	3,504,623

Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են էլեկտրաէներգիայի վաճառքից առաջացած «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից ստացվելիք գումարները, որը հանդիսանում է Ընկերության միակ հաճախորդը: Առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 1 ամիս (2018թ.՝ 1 ամիս):

Կանխավճարները հիմնականում տրված են «Թի Էն Ինթերնեշընլին» օգտագործված միջուկային վառելիքի համար չոր պահպանման տարաներ ձեռքբերելու նպատակով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերն արտահայտված են հայկական դրամով:

25 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

8 Ժամկետային ավանդներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մայր գումար	8,909,906	8,000,000
Հաշվեգրված տոկոս	103,880	133,963
Տոկոսադրույք	12.26%	12.76%
Մարման ժամկետ	12 փետրվարի 2020թ.	11 փետրվարի 2019թ.

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար 1,163,340 հազար դրամի (2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար՝ 1,274,341 հազար դրամի) տոկոսային եկամուտը ներառված է ֆինանսական եկամտում:

Ժամկետային ավանդներն արտահայտված են հայկական դրամով:

9 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	4,752	5,879
Բանկային հաշիվներ	2,693	127,398
	7,445	133,277

Տե՛ս ծանոթագրություն 25՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

10 Կապիտալ և պահուստներ

10.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2019թ.	Սովորական բաժնետոմսեր 2018թ.
Հայտարարված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 3,665,899.77 դրամ	4,000	4,000

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը բաշխված են և ամբողջությամբ վճարված: Ընկերության բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որը ներկայացնում է Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը:

10.2 Պահուստային կապիտալ

Կանոնադրության համաձայն՝ Ընկերությունը պետք է բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով պահուստային կապիտալ ստեղծի: Պահուստային կապիտալը ստեղծվում է կուտակված շահույթից կատարված մասհանումների միջոցով: Մասհանումները կարգավորվում են Ընկերության կանոնադրությամբ: Պահուստն օգտագործվում է Ընկերության ապագա կորուստները ծածկելու նպատակով:

10.3 Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է բաժնետիրոջից ստացված փոխառությունների իրական արժեքի և պայմանագրային գումարի միջև տարբերությունը:

11 Վարկեր և փոխառություններ

Վարկերն ու փոխառություններն իրենցից ներկայացնում են Ֆինանսների նախարարությունից ստացված վարկերը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հետ ենթավարկային պայմանագրերը կնքվել են Հայաստանի Հանրապետության, ի դեմս Ֆինանսների նախարարության, և Ընկերության միջև համապատասխան ծրագրերը ֆինանսավորելու համար: Ենթավարկային պայմանագրերին նախորդել են Ֆինանսների նախարարության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ու Ռուսաստանի Դաշնության հետ կնքված վարկային պայմանագրերը: Համաձայն վարկային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է ստացված ֆինանսավորման ընդհանուր գումարի չափով ենթավարկեր տրամադրել Ընկերությանը:

Ֆինանսների նախարարությունից ստացված վարկերն իրենցից ներկայացնում են՝

					Հազար դրամ	
	Արժույթ	Մարման ժամկետ	Անվանա-կան տոկոսա-դրույք	Արդյունա-վետ տոկոսա-դրույք	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՌԴ միջկառավարական վարկ	ԱՄՆ դոլար	2029թ.	3.0%	3.0%	83,861,174	65,305,341
ՌԴ միջկառավարական վարկի համաֆինանսավորում	ՀՀ դրամ	2029թ.	3.0%	3.0%	9,137,643	5,830,891
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)	ԱՄՆ դոլար	2040թ.	3.9%	3.9%	3,806,999	3,722,192
ՀՀ Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	ՀՀ դրամ	2035թ.	0.75%	9.0%	563,864	582,154
					97,369,680	75,440,578

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 4-ում, համաձայն Ռուսաստանի Դաշնության և ՀՀ կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքված համաձայնագրի՝ Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է միջպետական վարկ՝ ՀՀ տարածքում Հայկական ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետը երկարաձգելու ծրագիրը ֆինանսավորելու համար: Պայմանագրի ամբողջ գումարը կազմում է 270,000 հազար ԱՄՆ դոլար: Համաձայն պայմանագրի 2.5 ենթակետի ամբողջ գումարը պետք է օգտագործվեր մինչև 2019թ. վերջ, սակայն 2019թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ օգտագործվել է ընդամենը 173,575 հազար ԱՄՆ դոլար: Արդյունքում հաշվեգրվել է կոմիսիոն վճար՝ չօգտագործված գումարի 1%-ի՝

462,553 հազար դրամի չափով: Հաշվեգրված կոմիսիոն վճարի գծով պարտավորությունը ներառված է «Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում»:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը 2016թ. մայիսի 16-ին կնքված 8615-AM վարկային պայմանագրի համաձայն Ընկերությանը տրամադրել է 8,550 հազար ԱՄՆ դոլարի վարկ՝ ՀՀ Էներգետիկայի ոլորտի Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման նպատակով: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկային պայմանագրի շրջանակներում տրամադրվել է 7,906 հազար ԱՄՆ դոլար: Չօգտագործված վարկային մնացորդը 309,030 հազար դրամին համապատասխան ենթակա է օգտագործման մինչև 2021թ.-ի հուլիսի 30-ը:

Վարկերի իրական արժեքները մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

12 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ

	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	12,260,489	7,827,343
Տարվա ընթացքում ստացված	2,412,546	4,857,537
Շահույթում կամ վնասում ճանաչված եկամուտ	(1,062,525)	(424,391)
Տարեվերջի մնացորդ	13,610,510	12,260,489

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, համաձայն Ռուսաստանի Դաշնության և ՀՀ կառավարության միջև կնքված համաձայնագրի՝ Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է միջպետական վարկ՝ ՀՀ տարածքում Հայկական ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետը երկարաձգելու ծրագիրը ֆինանսավորելու համար: Նույն համաձայնագրով ամրագրվել է, որ Ռուսաստանի Դաշնությունը 30,000 հազար ԱՄՆ դոլարի անհատույց ֆինանսական օգնություն է տրամադրելու Ընկերությանը, վերոնշյալ ծրագրի ֆինանսավորման համար:

Բացի վերը նկարագրածից Ընկերությունը շնորհներ է ստանում նաև ՀՀ կառավարությունից:

13 Հետաձգված հարկային պարտավորություններ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2019թ.	2018թ. (վերա-ներկայացված)
Տարեսկզբի մնացորդ	2,042,476	2,605,222
Շահույթում կամ վնասում ճանաչված եկամուտ	(43,109)	(562,746)
Տարեվերջի մնացորդ	1,999,367	2,042,476

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2019թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Պաշարներ	119,241	(16,838)	102,403
Տրված փոխառություններ	364,068	(359,136)	4,932
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	330,528	8,298	338,826
Փոխանցվող հարկային վնաս	163,786	(163,786)	-
	977,623	(531,462)	446,161
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	-	83,260	83,260
Հիմնական միջոցներ	3,020,099	(657,831)	2,362,268
	3,020,099	(574,571)	2,445,528
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(2,042,476)	43,109	(1,999,367)

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2018թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2018թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	28,759	(28,759)	-
Պաշարներ	115,367	3,874	119,241
Տրված փոխառություններ	362,176	1,892	364,068
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	65,500	(65,500)	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	282,979	47,549	330,528
Փոխանցվող հարկային վնաս	-	163,786	163,786
	854,781	122,842	977,623
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	3,460,003	(439,904)	3,020,099
	3,460,003	(439,904)	3,020,099
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(2,605,222)	562,746	(2,042,476)

Ներառյալ՝	2019թ.	2018թ.
Մարման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում	1,649,126	1,869,934
Մարման ենթակա 12 ամսվա ընթացքում	350,241	172,542

Հարկային դրույքաչափերի փոփոխություններ և հետագա հարկային ծախսերի վրա ազդող գործոններ

2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում 2020թ. հունվարի 1-ից ակնկալվում է շահութահարկի դրույքաչափի նվազեցում 20%-ից 18%-ի: Համապատասխանաբար, 2019թ. դեկտեմբերի 31-ի

դրությամբ հետաձգված հարկի մնացորդները ճանաչվել են՝ կիրառելով 18% դրույքը (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20%):

14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ատոմակայանի շահագործման վճարների գծով պարտավորություններ	7,010,550	6,610,550
Միջուկային վառելիքի գծով կրեդիտորական պարտքեր	4,286,228	6,450,479
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	2,241,212	1,991,009
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով պարտավորություններ	1,911,231	-
Կոմիսիոն վճարի գծով պարտավորություն	462,553	-
Վճարվելիք հարկեր և տուրքեր	423,879	1,415,609
Այլ	335,663	101,192
	16,671,316	16,568,839

Ատոմակայանի շահագործման գծով վճարներն իրենցից ներկայացնում են այն գումարները, որոնք Ընկերությունը պարտավոր է փոխանցել հատուկ նշանակության հաշվին, որը կառավարում է Ֆինանսների նախարարության Գանձապետական վարչությունը: Հաշվի նպատակը ատոմակայանի՝ ապագայում շահագործումից հանելու համար ֆինանսական միջոցների կուտակումն է: Փոխանցումները պետք է կատարվեն եռամսյակային սկզբունքով՝ մինչև ատոմակայանի շահագործումից հանելը: Ընկերության կողմից փոխանցումների չափը սահմանված է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ էլեկտրաէներգիայի տարեկան սակագնում ներառված գումարների չափով:

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 5 ամիս (2018թ.՝ 5 ամիս): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 25-ում:

15 Հասույթ պայմանագրերից

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլեկտրաէներգիայի վաճառք	6,526,248	4,671,536
Հզորության վաճառք	16,128,873	12,765,801
	22,655,121	17,437,337
Առաքված էլեկտրաէներգիա միլիոն կՎտժ	2,029.0	1,898.1
Միջին սակագինը դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ)	11.49	9.03

Ընկերության սակագները հաշվարկվում և սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկայի հիման վրա: ՀԾԿՀ-ն սովորաբար էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները վերանայում է յուրաքանչյուր տարի:

Ընկերության համար սահմանված արտադրված էլեկտրաէներգիայի և տրամադրված հզորության սակագները 1 կՎտժ-ի համար (առանց ԱԱՀ) ներկայացված են ստորև.

Մեկնարկի ամսաթիվ	Էլեկտրաէներգիա	Հզորություն
1/2/2017թ.	5.60	3,598.45
1/2/2018թ.	1.96	4,632.13
1/2/2019թ.	3.41	5,228.98

16 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա-յացված)
Միջուկային վառելիքի ինքնարժեք	6,623,445	7,049,188
Մաշվածություն և ամորտիզացիա	6,773,598	3,937,046
Հատուցումներ աշխատակիցներին	6,692,704	6,382,447
Օգտագործված նյութերի արժեք	1,071,754	1,133,622
Սպասարկման և վերանորոգման ծախսեր	767,767	375,583
Գազ և էլեկտրաէներգիա	566,803	491,708
Ատոմակայանի շահագործման վճար	400,000	400,000
Անվտանգություն	399,185	404,855
Այլ	138,160	215,629
	23,433,416	20,390,078

17 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	1,165,268	1,130,025
Մաշվածություն և ամորտիզացիա	175,198	182,762
Գործուղման ծախսեր	46,965	51,036
Պարտադիր վճարներ	38,699	51,695
Ապահովագրական վճարներ	24,368	29,891
Փոստային և հաղորդակցման ծառայություններ	24,163	24,810
Այլ	65,879	125,127
	1,540,540	1,595,346

18 Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Հիմնական միջոցների դուրսգրում	543,180	9,205
Հատուցումներ աշխատակիցներին	120,895	53,910
Մասնագիտական և անդամակցության վճարներ	110,835	113,950
Հարկեր և տուրքեր	121,786	28,553
Արհմիության ծախսեր	85,528	114,990
Մաշվածություն և ամորտիզացիա	78,395	57,659
Այլ	126,446	308,362
	1,187,065	686,629

19 Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված վարկերի գծով տոկոսային ծախսեր	726,774	235,645
Կրեդիտորական պարտքերի զեղչման հակադարձում	35,389	45,646
	762,163	281,291

20 Փոխարժեքային տարբերությունից օգուտ, զուտ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(4,274)	14,271
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	667,406	26,480
	663,132	40,751

21 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Ընթացիկ հարկ	116,055	-
Հետաձգված հարկ	(43,109)	(562,746)
	72,946	(562,746)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(1,289,825)		(3,728,517)	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%)	(257,965)	20.00	(745,703)	20.00
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	716,849	(55.58)	182,957	(4.91)
Հարկային վնասների օգտագործում	(163,786)	12.70	-	-
Հարկային դրույքաչափի փոփոխության ազդեցությունը	(222,152)	17.22	-	-
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	72,946	(5.66)	(562,746)	15.09

22 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Կորոնավիրուս

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Այս նոր տիպի կորոնավիրուսի բռնկումը առաջացրել է արտասահմանում գործող կամ արտերկրյա ընկերությունների հետ սերտ առևտրային կապեր ունեցող ընկերությունների գործունեության էական խեղաթյուրումներ: Կորոնավիրուսային բռնկման հետ կապված գլոբալ արձագանքը շարունակում են արագորեն ընդլայնվել: COVID-19- ն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության Կառավարությունը երկրում արտակարգ իրավիճակ հայտարարեց, որը երկարաձգվեց մինչև 2020թ. հուլիսի 13-ը:

Ընկերության գործունեության վրա նշանակալի ազդեցությունը կարող է արտահայտվել մատակարարման ցանցի խափանումների, աշխատակազմի հասանելիության

սահմանափակման, աշխատանքների կատարման ժամկետի երկարացման, և այլ երևույթների տեսքով:

Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել վերը նկարագրվածի ֆինանսական ազդեցությունը:

Վարկային համաձայնագրի փոփոխություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 11-ում ՌԴ և ՀՀ կառավարության միջև «Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգում» ծրագրի շրջանակում կնքվել է վարկի տրամադրման մասին համաձայնագիր, ինչի արդյունքում ՀՀ կառավարությունը Ընկերությանը տրամադրում է ենթավարկի տեսքով ֆինանսավորում այդ ծրագիրն իրականացնելու համար: Համաձայնագրով վարկի տրամադրման վերջնաժամկետ էր սահմանված 2019թ. դեկտեմբերի 31-ը, սակայն Ընկերությունը չի հասցրել օգտագործել ամբողջ վարկային միջոցները մինչև այդ ամսաթիվը:

Լրացուցիչ վարկային միջոցների անհասանելիությամբ պայմանավորված, ՀՀ Կառավարությունը 2020թ. հունիսի 11-ին ընդունել է N953-Ն որոշումը, համաձայն որի ՀՀ տարածքում ատոմակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով 2020-2022թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը կտրամադրվի երկարաժամկետ վարկ՝ 63,200,000 հազար դրամի չափով:

Ի լրումն, 2020թ. հունիսի 11-ին ՀՀ կառավարությունն ընդունել է N945-Ա որոշումը՝ որով հաստատել է վերը նշված ծրագրի շրջանակներում «Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող միջոցառումների ծրագիրը: Ծրագրի իրականացման նպատակով Ընկերության և «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի միջև կնքվելու է շրջանակային համաձայնագիր, որի գումարը չպետք է գերազանցի 40,255 հազար ԱՄՆ դոլարը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2021թ.-ին:

23 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում ներկայումս իրականացվող՝ ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի հիման վրա, համաձայն որի ատոմակայանի շահագործման ժամկետը կերկարացվի 10 տարով ծրագրի մեկնարկի պահից: Եթե կայանի շահագործման ժամկետը իրականում երկարացվի ավելի քան 10 տարով, հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները կտարբերվեն ընթացիկ գնահատումներից, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

24 Ֆինանսական գործիքներ

24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,776,302	2,856,932
Ժամկետային ավանդներ	9,013,786	8,133,963
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7,445	133,277
	12,797,533	11,124,172
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում		
Ներդրումներ բաժնետոմսերում	41,804	41,804
	12,839,337	11,165,976

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	97,369,680	75,440,578
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16,247,437	15,153,230
	113,617,117	90,593,808

25 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով: Բացի այդ Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով վարկեր, որոնք օգտագործվել են ընթացիկ ծրագրերը ֆինանսավորելու համար:

ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	367	616
	367	616
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	87,668,173	69,027,533
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,830,893	6,454,798
	92,499,066	75,482,331
Զուտ արդյունք	(92,498,699)	(75,481,715)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2018թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Շահույթ կամ վնաս	9,249,870	7,548,172

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա ձեռքբերումների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն և լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝

ապահովելով համապատասխան չափի հաստատուն և լողացող տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

Պայմանագրային և արդյունավետ միջին տոսկոսադրույքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 11-ում:

Ստորև ներկայացված զգայունության վերլուծությունն իրականացվել է տոկոսադրույքի 1%-ի փոփոխության համար: 1%-ը ղեկավարության կողմից գնահատված տոկոսադրույքի հավանական փոփոխությունն է:

Եթե տոկոսադրույքը լիներ 1% բարձր/ցածր, իսկ մյուս փոփոխականները մնային հաստատուն, ապա Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը կնվազեր/կաճեր 38,070 հազար դրամով (2018թ.՝ կնվազեր/կաճեր 37,222 հազար դրամով):

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և ժամկետային ավանդները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և բաժնետոմսերում ներդրումները:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Ներդրումներ բաժնետոմսերում	41,804	41,804
Դեբիտորական պարտքեր	3,776,302	2,856,932
Ժամկետային ավանդներ	9,013,786	8,133,963
Մնացորդներ բանկերում	2,693	127,398
	12,834,585	11,160,097

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 7- ում, Ընկերության միակ հաճախորդը «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ն է, որի գծով պարտքային ռիսկն աննշան է, քանի որ դեբիտորական պարտքն իրենից ներկայացնում է 2019թ.-ի դեկտեմբեր ամսվա պարտքը:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված

կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2019թ.	Անտոկոս	Գործիքներ փոփոխուն տոկոսադրույքով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		3.95%	3.00%	
Մինչև 6 ամիս	5,800,326	56,177	6,260,533	12,117,036
6 ամսից մինչև 1 տարի	9,984,558	76,567	5,928,337	15,989,462
1-5 տարի	-	607,957	45,243,008	45,850,965
Ավելի քան 5 տարի	-	6,204,860	49,762,787	55,967,647
	15,784,884	6,945,561	107,194,665	129,925,110

2018թ.	Անտոկոս	Գործիքներ փոփոխուն տոկոսադրույքով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		3.89%	3.00%	
Մինչև 6 ամիս	2,087,882	72,417	785,819	2,946,118
6 ամսից մինչև 1 տարի	13,065,348	68,825	1,133,071	14,267,244
1-5 տարի	-	709,959	35,365,076	36,075,035
Ավելի քան 5 տարի	-	6,153,103	46,540,079	52,693,182
	15,153,230	7,004,305	83,824,044	105,981,579

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ բանկային ավանդները, դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության ավանդները, դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման մեկ ամսվա ընթացքում:

26 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

26.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները գրեթե հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքը որոշվել է՝ զեղչելով համապատասխան դրամական մրջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների համար շուկայական տոկոսադրույքը: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է: Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

27 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, լրացուցիչ կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք բացահայտված են ծանոթագրություն 11-ում:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զուտ պարտք		
Ընդհանուր վարկեր և փոխառություններ	97,369,680	75,440,578
Հանած՝ դրամական միջոցներ	(7,445)	(133,277)
Զուտ պարտք	97,362,235	75,307,301
Ընդհանուր սեփական կապիտալ	47,874,799	49,237,570
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	2.0	1.5

28 Պարտավորվածություններ

Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ

պայմանագրեր է կնքել 1,751,587 հազար դրամի հիմնական միջոցներ ձեռք բերելու նպատակով:

29 Պայմանականություններ

29.1 Պատճառված հնարավոր վնասի համար պատասխանատվություն

«Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» Վիեննայի Կոնվենցիայի համաձայն՝ Ընկերությունը՝ որպես միջուկային կայանքի շահագործող, պարտավոր է փոխհատուցել ատոմակայանի շահագործման արդյունքում պատճառված միջուկային ցանկացած վնաս: Փոխհատուցման գումարը, կարգն ու ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Վերոհիշյալ կոնվենցիայի համաձայն՝ փոխհատուցման գումարը կարող է սահմանափակվել առնվազն 5,000,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր միջուկային պատահարի համար: Օրենսդրության համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է ունենալ բավարար ֆինանսական միջոցներ՝ պատճառված հնարավոր ցանկացած վնասի պատասխանատվությունը ծածկելու համար: Ընկերությունը վերոնշյալ պայմանները բավարարելու համար պետք է տարեկան 150,000 հազար դրամի չափով մասհանումներ կատարի: Նշված գումարը ներառված է Ընկերության էլեկտրաէներգիայի տարեկան սակագներում: Ընկերության ֆինանսական հաշվետվություններում այս պարտականության վերաբերյալ պահուստ չի ստեղծվել, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ միջուկային պատահարի հավանականությունը չնչին է:

29.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի պատահարների կամ դեպքերի հանդես գալը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

29.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

29.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարութունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված ՀՀ կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

30 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության՝ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ

	2019	2018
Հունվարի 1-ի դրությամբ	75,440,578	33,337,853
Դրամային հոսքերից		
Մուտքեր	3,378,473	2,532,973
Մարումներ	(62,753)	(62,753)
Վճարված տոկոսներ	(2,036,450)	(992,042)
Ոչ դրամային հոսքերից		
Ոչ դրամային ավելացումներ	19,183,033	39,164,924
Հաշվեգրված տոկոսներ	2,520,418	1,458,788
Կոմիսիոն վճարի հաշվեգրում	(462,553)	-
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(591,066)	835
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	97,369,680	75,440,578

Ոչ դրամային ավելացումներն իրենցից ներկայացնում են ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացման գծով ուղղակի մատակարարներին Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից կատարված վճարումները:

31 Կապակցված կողմեր

Հայաստանի Հանրապետության կառավարությանը պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%, հետևաբար բոլոր պետական ձեռնարկությունները համարվում են Ընկերությանը կապակցված: Ընկերության կապակցված կողմերը ներառում են նաև հիմնական ղեկավար անձնակազմը:

31.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ի դեմս Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության:

31.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բաժնետոմսեր		
Ստացված փոխառություններ	22,561,506	41,697,897
Տոկոսային ծախսի հաշվեգրում	2,520,418	1,458,788
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	78,167	88,888
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և այլ հատուցումներ	78,641	58,667

Հազար դրամ Մնացորդներ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բաժնետոմսեր		
Վարկեր և փոխառություններ	97,369,680	75,440,578
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	541	1,047
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	63,457	50,391

32 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Նախորդ տարիներին առնչվող սխալների բացահայտման պատճառով՝ Ընկերությունը 2019թ. ընթացքում որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ8-ի «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*»: Վերոնշյալի արդյունքում Ընկերության ղեկավարությունը որոշել է համապատասխան ճշգրտումներ կատարել ֆինանսական հաշվետվութուններում, որոնք կիրառվել են հետընթաց՝ համաձայն Ընկերության որդեգրած քաղաքականության (տե՛ս ծանոթագրություն 2.6):

Ճշգրտումների ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև.

1. Ապաճանաչվել են ատոմակայանը շահագործումից հանելու և օգտագործված միջուկային վառելիքի պահպանման պահուստները, քանի որ ձևակերպված գումարները չէին համապատասխանում պահուստների սահմանմանը համաձայն ՀՀՄ 37 «*Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ*» ստանդարտի: Վերը նշված պահուստների ապաճանաչման արդյունքում առաջացել է մաշվածության և տոկոսային ծախսերի, ինչպես նաև ատոմակայանի շահագործման վճարի հաշվեգրման ճշգրտումների անհրաժեշտություն:

2. «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի կողմից ներկայացված կատարողական ակտերի ճշգրտման հետևանքով կատարվել է վարկերի և դրամաշնորհների, ինչպես նաև հիմնական միջոցների մնացորդների ճշգրտում:

3. Կատարվել է ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով պարտավորությունների ճշգրտում՝ համաձայն հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի:

4. Ճշգրտումներ են կատարվել ընթացիկ հարկային պարտավորությունների և հետաձգված հարկերի հաշիվներում:

5. Որոշակի սխալներ են բացահայտվել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի և որոշ այլ հաշվեգրումների ճշգրտման արդյունքում:

2018թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2018թ.հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների վերաներկայացման համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	122,797,577	(3,643,545)	119,154,032
Ոչ նյութական ակտիվներ	112,074	(7,500)	104,574
Ոչ ընթացիկ կանխավճարներ	2,935,307	-	2,935,307
Ներդրումներ բաժնետոմսերում	41,804	-	41,804
	125,886,762		122,235,717
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	21,542,372	-	21,542,372
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3,602,678	(98,055)	3,504,623
Ժամկետային ավանդներ	8,133,963	-	8,133,963
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	133,277	-	133,277
	33,412,290		33,314,235
Ընդամենը ակտիվներ	159,299,052		155,549,952
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	14,663,599	-	14,663,599
Պահուստային կապիտալ	954,943	-	954,943
Լրացուցիչ կապիտալ	1,585,206	-	1,585,206
Կուտակված շահույթ	32,006,755	27,067	32,033,822
	49,210,503		49,237,570
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	74,814,328	(185,296)	74,629,032
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12,281,077	(20,588)	12,260,489
Հետաձգված հարկային պարտավորություններ	2,159,982	(117,506)	2,042,476
Պահուստներ	11,474,556	(11,474,556)	-
	100,729,943		88,931,997
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	811,546	-	811,546
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,547,060	8,021,779	16,568,839
	9,358,606		17,380,385
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	159,299,052		155,549,952

Հազար դրամ	2018թ. հունվարի 1-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	77,265,332	(4,538,338)	72,726,994
Ոչ նյութական ակտիվներ	136,229	-	136,229
Ոչ ընթացիկ կանխավճարներ	2,868,015	-	2,868,015
Ներդրումներ բաժնետոմսերում	41,804	-	41,804
	80,311,380		75,773,042
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	23,152,014	-	23,152,014
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5,217,285	-	5,217,285
Ժամկետային ավանդներ	8,948,517	-	8,948,517
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	173,455	-	173,455
	37,491,271		37,491,271
Ընդամենը ակտիվներ	117,802,651		113,264,313
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	14,663,599	-	14,663,599
Պահուստային կապիտալ	954,943	-	954,943
Լրացուցիչ կապիտալ	1,585,206	-	1,585,206
Կուտակված շահույթ	35,199,593	-	35,199,593
	52,403,341		52,403,341
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	32,947,334	-	32,947,334
Հետաձգված հարկային պարտավորություններ	2,605,222	-	2,605,222
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7,827,343	-	7,827,343
Պահուստներ	10,748,888	(10,748,888)	-
Ոչ ընթացիկ առևտրային կրեդիտորական պարտքեր	3,539,115	-	3,539,115
	57,667,902		46,919,014
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	390,519	-	390,519
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,943,075	6,210,550	13,153,625
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	397,814	-	397,814
	7,731,408		13,941,958
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	117,802,651		113,264,313

Չբաշխված շահույթի վրա ազդեցության մանրամասները նկարագրված են ստորև.

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսի ճշգրտում	270,011	297,638
Պահուստների գծով տոկոսային ծախսերի հակադարձում	136,150	102,362
Ատոմակայանի շահագործման վճարի հաշվեգրում	(400,000)	(400,000)
Հետաձգված հարկերի ճշգրտում	117,506	-
Հաշվեգրված տուգանքներ	(98,055)	-
Այլ	1,455	-
	27,067	-